

Յ Ո Ւ Ե Լ Ե Ա Ր

ԱՐԺ. Տ. ՄԵՍՐՈՊ Ա. ՔԷՆՅ. ՓԼՕՆԿԵՐԵԱՆ

Անցեալ տարի, ազգիս ընդհանրական Հայրապետը, Տ. Տ. Գեորգ Զ. Կարողիկոս, գնահատելով Աղեֆանդրիոյ մեր գաղութին երկու հոգեւոր պատեօնեաները Արժ. Տ. Հայկազուն Քհնյ. Ոսկերիչեանը եւ Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Քեօկերեանը, անոնց կը շնորհէր քահանայական լսելախոյն եւ ծաղկեայ փիլոսոփայական իրաւունքը: Այս պարագան գեղեցիկ առիթը նկատուեցաւ որ երկու հոգեւոր հայրերու բարեկամները, առաջնորդներն ու գործակիցները, երախտագրական զգացումով բերեն իրենց լարգանքին տուրք վերոյիշեալներուն՝ տօնախմբելով անոնց յօբելեանները:

Սէն իր անցեալ տարուան Մայիսի քիւլին մէջ բերաւ իր արագին շնորհատուութիւնն ու յարգանքը յօբելեար Արժ. Տ. Հայկազուն Քհնյ. Ոսկերիչեանի: Այս առիթով, կը կրկնէ նոյն իր այդ զգացումը Արժ. Տ. Մեսրոպ Ա. Քհնյ. Քեօկերեանին: Աղեֆանդրիոյ Սկեղեցասիրաց Միութեան կողմէ կազմակերպուած իր յօբելեանին առիթով:

Արժ. Տ. Մեսրոպ Ա. Քհնյ. Քեօկերեան ծնած է 1884 ին Այնթապ: Իր նախնական կրթութիւնը առած է քաղի Հայկազնեան վարժարանը, յետոյ առաջնորդուած Սոյժառանգաւորացին: Վարած է ուսուցչական եւ տնօրէնի պատեօններ Այնթապի, Քիլիսի, Ալեքսանդրէի եւ Տեօքրեոյի ազգային կրթարաններու մէջ:

1911 Մայիս 22 ին ձեռնադրուած է քահանայ Մեսրոբի մէջ, ձեռամբ նահատակ Գեորգ Տ. Ներսէս Արք. Գանդիլեանի, Պողոտոյի Ս. Սարգիս Սկեղեցուոյ վրայ:

Տարագրութեան օրջանին կը բաժնէ իր հօսին նախասագիրը, եւ դժնդակ պայմաններու մէջէն, շնորհիւ իր հոգեկան արիւնք-

ութեան եւ հայու ճարտարութեան ու շարժառիթեան, կը յաջողի վերջապէս հարեմ ու սուրեն մազապուծ փրկել իր կեանքը Տեքրայէն — Քափիէ — Պուսէյրա, յետոյ Սրուսաղեմ, անկէ Գամաղոս, ապա Ասանա, Կիպրոս ու վերջապէս Աղեֆանդրիա:

Արժանապատիւ Հայրը քէ տարագրութեան սել օրերուն եւ քէ մանուանդ Աղեֆանդրիոյ մէջ իր տուրջ հառորդ դարու գործունէութեան ընթացքին, իբր ուսուցիչ եւ քահանայ, ծառայած է իր հօսին անձնազրի ճաւասարութեամբ:

Աղեֆանդրիոյ մէջ, զլիաւորաբար, ուր իր կեանքին լուսադոյն մասն է բաշխուէր, իբր հոգեւոր պատեօնեայ Ս. Պողոս-Պետրոս Սկեղեցուոյ եւ առաջնորդական փոխանորդ, Յարելեարը կրցած է ըլլալ պարտաճանայ ու խոնձ, տեղի շտապ այն անպատեհութեանց որ բաժինն է եղած նման գործիչներու՝ մեր ազգային կեանքին մէջ:

Եղած է նախագահ Աղջասաց Հոգաբարձութեան եւ հիմնադիր ու ղեկավարը Սկեղեցասիրաց Միութեան, որուն կատարած կրօնաբարոյական եւ դաստիարակական արդիւնքին մէջ տես ծանր կը կօտէ բաժինը Արժանապատիւ Յօբելեարին:

Շնորհիւ իր արեւանդն ջանքերուն կարի կարիքի ճաւախուած լուսաներով Սիուփի մէջ գնուած է այլեւս ազգային սեպհականութիւն եղած հող մը եւ հոն հաստատուած մասուն:

Ինչպէս կ'երեւի կենսագրական այս հակիրճ նամակներէն, Արժանապատիւ Յօբելեարը եղած է մեքի եւ հոգիի շնորհներով օժուէ հոգեւորական մը եւ մանաւանդ հայրը իր հօսին, եւ ջանացած ու ճիւրթած է այն՝ ինչ որ պարտքն է նկատած իր խղճին:

Սէն յանուն Նորին Ամենապատուութիւն Մրբազան Պատրիարք Հօր եւ բովանդակ Միաբանութեան, կը շնորհատուէր արժանապատիւ Յօբելեարը, իրեն մաղթելով երկար կեանք եւ արդիւնաբերուած ծառայութիւններ մեր մեքի եւ հոգիի մարդերուն մէջ:

